ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2025թ. հոկտեմբերի 2-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները շնորհավորեցին ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, խորհրդի անդամ, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Իշխանի Վարդանյանի ծննդյան 70-ամյակը: Ֆակուլտետի գիտխորհրդի անունից շնորհավորական ուղերձով հանդես եկավ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը: Ներկայացրեց հոբելյարի վաստակն ու ներդրումը բուհական համակարգի գիտակրթական կյանքում, շնորհավորական ջերմ խոսքերով մաղթեց նորանոր հաջողություններ, ուժ ու եռանդ:

Խորհրդի նախագահը նշեց, որ գիտխորհրդի կազմում կատարվել են փոփոխություններ: ԳԽ կազմից մահվան պատճառով հանվել է ընտրովի անդամ Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Վարդան Բոստանջյանը, և որպես ընտրովի անդամ հաստատվել է նույն ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Հասմիկ Դովլաթյանը: Սեփական դիմումի համաձայն, ԳԽ կազմից հանվել է սովորող անդամ Լիանա Այվազյանը, և որպես սովորող անդամ հաստատվել է «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Հայկ Մնացականյանը: Հաշվի առնելով ԳԽ ընտրովի անդամ պրոֆեսոր, տ.գ.դ. Վահրամ Աբրահամյանի մեծ վաստակը՝ նա ֆակուլտետի ԳԽ կազմում ներառվել է որպես հրավիրյալ անդամ:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Նոր ընդունված առկա ասպիրանտի թեմայի և գիտական ղեկավարի հաստատում
2. 2026-27 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ անվճար հիմունքով ասպիրանտուրայի ընդունելության տեղերի ձևավորման նպատակով հայտերի հաստատում
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգի նոր խմբագրությամբ հաստատում
4. «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրման որոշման կայացում

5. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ասպիրանտի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին հարցը:

1. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտ Միհրան Վախթանգի Սիսակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Պետական պարտքի կառավարման կառուցակարգերի բարելավման ուղիները ՀՀ տնտեսական զարգացման համատեքստում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանը: Հավելեց նաև, որ ասպիրանտ Միհրան Սիսակյանը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 01.10.25թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտ Միհրան Վախթանգի Սիսակյանի՝ «Պետական պարտքի կառավարման կառուցակարգերի բարելավման ուղիները ՀՀ տնտեսական զարգացման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

2. 2026-2027 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ անվճար հիմունքով ասպիրանտուրայի ընդունելության տեղերի ձևավորման նպատակով հայտերի հաստատում

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ներկայացրեց 2025/2026 ուստարվանից գործող ասպիրանտուրայի տեղերի հայտերի ներկայացման նոր կարգը: Համաձայն որի՝ ղեկավարման իրավունք ունեցող հայտատուն պետք է առցանց առավելագույնը 3 ուղղություն ներկայացնի: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը

ներկայացված գիտական ուղղությունների արդիականությունը և նպատակահարմարությունը որոշելուց հետո միայն կհաստատի այդ ուղղությունները, իսկ ասպիրանտը կընտրի հաստատված ուղղություններից այն, որը նախընտրում է աշխատելու համար: Օրակարգի առաջին հարցի քննարկումը՝ ըստ ամբիոնների, սկսելու համար ձայնը փոխանցեց Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանին:

2.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի 2026/2027 ուստարվա բուհական հայտերի ներկայացման նոր պահանջների համաձայն գիտական ուղղությունների հաստատման մասին հարցը:

2.1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Թորոս Թորոսյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «ՀՀ արտաքին տնտեսական կապերը գլոբալ և տարածաշրջանային նոր մարտահրավերների պայմաններում»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունը ներկայացվում է ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղության հիմնավորումները կցված են, և տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանի ներկայացրած գիտական ուղղությունը 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.1.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 29.09.25թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Թորոս Թորոսյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «ՀՀ արտաքին տնտեսական կապերը գլոբալ և տարածաշրջանային նոր մարտահրավերների պայմաններում», երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Ֆիրուզա Մայիլյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «ՀՀ տնտեսական աճը և զարգացման հիմնախնդիրները»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունը ներկայացվում է ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղության հիմնավորումները կցված են:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Ֆ.Մայիլյանի ներկայացրած գիտական ուղղությունը 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.1.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 29.09.25թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Ֆիրուզա Մայիլյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «ՀՀ տնտեսական աճը և զարգացման հիմնախնդիրները», երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Սամսոն Դավոյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «Հարավային Կովկասի երկրների տնտեսական վերափոխումների վերլուծությունը»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունը ներկայացվում է ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղության հիմնավորումները կցված են:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Դավոյանի ներկայացրած գիտական ուղղությունը 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.1.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 29.09.25թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Սամսոն Դավոյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «Հարավային Կովկասի երկրների տնտեսական վերափոխումների վերլուծությունը», երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Կառավարման և գործարարության ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի 2026/2027 ուստարվա բուհական հայտերի ներկայացման նոր պահանջների համաձայն գիտական ուղղությունների հաստատման մասին հարցը:

2.2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հայկ Սարգսյանի ներկայացրած գիտական ուղղությունները. առկա ուսուցման համար՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական, անվտանգային և ինստիտուցիոնալ զարգացման հիմնախնդիրները կայուն զարգացման համատեքստում», հեռակա ուսուցման համար՝ «Կանաչ տնտեսության կառավարման արդի հիմնախնդիրները կայուն զարգացման նպատակադրումներում»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղությունների հիմնավորումները կցված են:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյանի ներկայացրած գիտական ուղղությունները 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 01.10.25թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հայկ Սարգսյանի ներկայացրած՝

1) «ՀՀ սոցիալ-տնտեսական, անվտանգային և ինստիտուցիոնալ զարգացման հիմնախնդիրները կայուն զարգացման համատեքստում» գիտական ուղղությունը երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղի հաստատման համար,

2) «Կանաչ տնտեսության կառավարման արդի հիմնախնդիրները կայուն զարգացման նպատակադրումներում» գիտական ուղղությունը երաշխավորել 2026/2027 ուստարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Սարգիս Ղանթարջյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «Հայաստանի Հանրապետության բուհական համակարգի զարգացման հիմնահարցերը»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունը ներկայացվում է ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղության հիմնավորումները կցված են:

2. Ելույթ ունեցավ տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը: Նշեց, որ առաջարկվող գիտական ուղղության վերնագրում տնտեսական բաղադրիչը բացակայում է և առաջարկեց խմբագրել այն:

3. Դոցենտ Ա.Հակոբջանյանը, անդրադառնալով գիտական ուղղության խմբագրման առաջարկին, նշեց, որ ամբիոնի նիստում քննարկվել են սույն գիտական ուղղության հիմնավորումները, որոնք ամփոփ ներկայացված են անոտացիայում:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ղանթարջյանի ներկայացրած գիտական ուղղությունը 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.2.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 01.10.25թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Սարգիս Ղանթարջյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «Հայաստանի Հանրապետության բուհական համակարգի զարգացման հիմնահարցերը», երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Վարդան Ալեքսանյանի ներկայացրած գիտական ուղղությունները. առկա ուսուցման համար՝ «Մարդկային կապիտալի զարգացման հիմնահարցերը ՀՀ գիտելիքահենք տնտեսության

ձևավորման համատեքստում», «ՀՀ ագրոպարենային համակարգի նորարարական զարգացման հեռանկարները», հեռակա ուսուցման համար՝ «Մարդկային կապիտալի արտահոսքը (brain drain) և դրա տնտեսական հետևանքները Հայաստանում», «ՀՀ պարենային անվտանգության ապահովման խնդիրներն ու հեռանկարները գլոբալ մարտահրավերների պայմաններում»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղությունների հիմնավորումները կցված են, և տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանի ներկայացրած գիտական ուղղությունները 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.2.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 01.10.25թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Վարդան Ալեքսանյանի ներկայացրած՝

1) «Մարդկային կապիտալի զարգացման հիմնահարցերը ՀՀ գիտելիքահենք տնտեսության ձևավորման համատեքստում» և «ՀՀ ագրոպարենային համակարգի նորարարական զարգացման հեռանկարները» գիտական ուղղությունները երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար,

2) «Մարդկային կապիտալի արտահոսքը (brain drain) և դրա տնտեսական հետևանքները Հայաստանում» և «ՀՀ պարենային անվտանգության ապահովման խնդիրներն ու հեռանկարները գլոբալ մարտահրավերների պայմաններում» գիտական ուղղությունները երաշխավորել 2026/2027 ուստարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի 2026/2027 ուստարվա բուհական հայտերի ներկայացման նոր պահանջների համաձայն գիտական ուղղությունների հաստատման մասին հարցը:

2.3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի հարգելի բացակայությամբ

պայմանավորված, ամբիոնի ընդունած որոշումը կներկայացնի գիտխորհրդի քարտուղար, դոցենտ Հ.Մարգարյանը:

2. Գիտխորհրդի քարտուղար, դոցենտ Հ.Մարգարյանը ներկայացրեց Ֆինանսահաշվային ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գևորգ Կիրակոսյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Հարկային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները ՀՀ տնտեսական զարգացման ժամանակակից փուլում», «Բյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ տնտեսական զարգացման ժամանակակից փուլում»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղությունների հիմնավորումները կցված են:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Գ.Կիրակոսյանի ներկայացրած գիտական ուղղությունները 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 01.10.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գևորգ Կիրակոսյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Հարկային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները ՀՀ տնտեսական զարգացման ժամանակակից փուլում», «Բյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ տնտեսական զարգացման ժամանակակից փուլում», երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի 2026/2027 ուստարվա բուհական հայտերի ներկայացման նոր պահանջների համաձայն գիտական ուղղությունների հաստատման մասին հարցը:

2.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2026/2027

ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ. Արամ Առաքելյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «Թվային գովազդի արդյունավետության գնահատման հիմնախնդիրները մարքեթինգում»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունը ներկայացվում է ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղության հիմնավորումները կցված են, և տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը պատրաստ է պատասխանել հարցերին:

2. Ելույթ ունեցան տ.գ.թ., դոցենտներ Կ.Խաչատրյանը, Ա.Հակոբջանյանը և Վ.Ալեքսանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը: Մատնանշեցին, որ ներկայացված գիտական ուղղությունը մոտ է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությանը և Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությանը համապատասխանելու համար առաջարկեցին այն խմբագրել՝ վերնագրում ավելացնել «տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորում» եզրույթը:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց խմբագրական փոփոխությամբ հանդերձ քվեարկությամբ երաշխավորել տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանի ներկայացրած գիտական ուղղությունը 2026/2027 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.4 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 30.09.25թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ. Արամ Առաքելյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «Թվային գովազդի արդյունավետության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնախնդիրները մարքեթինգում», երաշխավորել 2026/2027 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (25 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ):

3. ԼՍԵՑԻՆ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ նախորդ ուստարում գործող կարգի համաձայն ֆակուլտետի դասախոսներից 44-ը արժանացել են դրամական պարգևի՝ ըստ գրանցած արդյունքների: Հավելեց, որ կարգում փոփոխություններ կատարելու առաջարկությանն արձագանքել են Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնից՝ ամբիոնի վարիչ, տ.գ.թ. Ա.Խառատյանը և դոցենտ, տ.գ.թ.

Ս.Սարգսյանը: Ընդգծեց, որ առաջարկությունները հիմնականում արտացոլված են կարգի փոփոխված տարբերակում:

Նշեց, որ գիտխորհրդի անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են կարգի փոփոխված տարբերակը, հետևաբար կարգում կատարված փոփոխությունների ներկայացումը կլինի հակիրճ: Նախ, անդրադարձավ խմբագրական բնույթի փոփոխություններին, հետո ներկայացրեց դասախոսների արտալսարանային գործունեության գնահատման կարգում ներառված բաղադրիչներին տրվող միավորների փոփոխությունները:

2. Տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Խաչատրյանը հարցեր հնչեցրեցին. կարգում դասախոսների արտալսարանային գործունեությունը շեշտադրված է բակալավրիատում, իսկ մագիստրատուրայում՝ ոչ, ուսանողական հարցման արդյունքները ներառված չեն, ամբիոնների վարիչների գործունեության գնահատում նախատեսված չէ, ինչպե՞ս պետք է գնահատվի աշխատողի կատարած աշխատանքը, եթե կարգի փոփոխված տարբերակում աշխատանքային խմբերում ներգրավվածությունը դուրս է եկել, ինչպե՞ս պետք է բաշխվի արտալսարանային աշխատանքի միավորը, եթե դրա կազմակերպմանը մասնակցել է մեկից ավելի դասախոս:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հարցադրումներին պատասխանելով նշեց, որ յուրաքանչյուր տարի կարգում կատարվող փոփոխությունները նպատակաուղղված են հնարավորինս օբյեկտիվ գնահատման արդյունքներ ձևավորելուն, իսկ գնահատման բաղադրիչների ընտրության հիմքը չափելիությունն է: Հավելեց, որ աշխատանքային խմբերում մասնակցությունը հաշվի կառնվի այլ գործունեության բաղադրիչում, իսկ արտալսարանային աշխատանքի միավորի հաշվարկման կարգը կխմբագրվի հետևյալ կերպ. եթե աշխատանքի կազմակերպմանը մասնակցել է մեկից ավելի դասախոս, ապա արտալսարանային աշխատանքի միավորը հավասարապես բաշխվում է նրանց միջև: Մատնանշեց, որ գործող կարգի լավարկման նպատակը դասախոսի գործունեության ներառականության բարձրացումն է և առաջարկեց Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը դնել քվեարկության:

3. ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգը նոր խմբագրությամբ:

Որոշումն ընդունվեց՝ քվեարկության 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

4. ԼՍԵՑԻՆ. «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրման որոշում կայացնելու հարցը:

4. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ հոկտեմբերի 8-10-ը ֆակուլտետում կանցկացվի «Փոխակերպվող տնտեսություն. մարդկային կապիտալի զարգացում, ստեղծարար նորարարական տնտեսություն, կայուն ներառական աճ» խորագրով միջազգային 2-րդ գիտաժողովը: Գիտաժողովը կազմակերպվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և Տարածաշրջանային գիտության ակադեմիայի համագործակցության շրջանակում: Հավելեց, որ այս միջոցառման ժամանակ նախատեսվում է պարգևատրել Տարածաշրջանային գիտության ակադեմիայի գործադիր տնօրեն Կարիմա Կուրտիտին (Բաց համալսարան (Նիդերլանդներ), Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ (Ստոկհոլմ, Շվեդիա)) և ամփոփ ներկայացրեց նրա ծավալած գործունեությունը:

Երկու դոկտորական աստիճան ստանալուց հետո, Կարիմա Կուրտիտն այժմ ավարտում է իր աբիլիտացիոն աշխատանքը Լեհաստանի գիտությունների ակադեմիայում (Վարշավա): Նա ակտիվորեն ներգրավված է եղել մի շարք ազգային և միջազգային հետազոտական նախագծերի և նախաձեռնությունների ձեռքբերման և իրականացման գործում (ԵՄ, Համաշխարհային բանկ, ESPON, ՏՀԶԿ, Եվրոստատ, NORFACE, JPI “Urban Europe”):

Կարիմա Կուրտիտը Նիդեռլանդների Տրանսպորտի և ենթակառուցվածքների, Էկոնոմիկայի, Նորարարության և շրջակա միջավայրի նախարարության, Նիդեռլանդների գիտական հետազոտությունների կազմակերպության (NWO) և NICIS-ի անունից «Ուրբանիստական Եվրոպա» համատեղ ծրագրային նախաձեռնության մշակման խորհրդի անդամ է: Բացի այդ, նա աշխատել է որպես Ամստերդամի Տնտեսական խորհրդին կից փորձագիտական խմբի անդամ:

Կարիմա Կուրտիտը հայտնի հրատարակիչների կողմից հրատարակված մի քանի գրքերի և բազմաթիվ միջազգային գրախոսվող ամսագրերի հատուկ հրատարակությունների գլխավոր խմբագիր է: Նա վեց գիտական ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ է: 235 հոդվածի և գրքի հեղինակ է, որից 218-ը Scopus-ում, H-ինդեքսը՝ 28:

Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանի առաջարկությամբ Տարածաշրջանային գիտության ակադեմիայի գործադիր տնօրեն Կարիմա Կուրտիտին «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրելու հարցը դրվեց քվեարկության:

4. ՈՐՈՇԵՑԻՆ. «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրել Տարածաշրջանային գիտության ակադեմիայի գործադիր տնօրեն Կարիմա Կուրտիտին (Բաց համալսարան (Նիդերլանդներ), Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ (Ստոկհոլմ, Շվեդիա)):

Որոշումն ընդունվեց՝ քվեարկության 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

5. Ընթացիկ հարցեր

5.1 «Լավագույն ուսանող» մրցույթին մասնակցության երաշխավորության մասին

5.1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի «Կառավարում» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Բենիկ Արտեմի Բալայանի մասնակցությունը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին երաշխավորելու հարցը։

5.1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, փոխդեկան, տ.գ.թ., դոցենտ Ն.Միրզոյանը նշեցին, որ Բենիկ Բալայանը ուսումնառության ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, վերլուծական կարողություններ, ակտիվորեն մասնակցել է ֆակուլտետի գիտական միջոցառումներին, կոնֆերանսներին: Շեշտադրեցին հատկապես Բ.Բալայանի՝ որպես ֆակուլտետի ՌԻԽ նախագահի արդյունավետ գործունեությունը:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Բ.Բալայանի մասնակցությունը մրցույթին երաշխավորելու հարցը դնել քվեարկության:

5.1.1 ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի «Կառավարում» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Բենիկ Արտեմի Բալայանին երաշխավորել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու համար։

«Լավագույն ուսանող» մրցույթին Բենիկ Բալայանի մասնակցության երաշխավորությունն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

5.1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի «Ֆինանսներ» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Մկրտիչ Հրաչյայի Ասոյանի մասնակցությունը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ

ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին երաշխավորելու հարցը։

5.1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ Մկրտիչ Ասոյանը ևս առանձնանում է իր ակտիվ ուսումնառությամբ՝ ցուցաբերելով գերազանց առաջադիմություն և վերլուծական կարողություններ, ակտիվ մասնակցություն ֆակուլտետի գիտական միջոցառումներին և կոնֆերանսներին: Ընդգրկված է ֆակուլտետի ՈՒԳԸ աշխատանքներում՝ որպես արտաքին կապերի պատասխանատու:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Մ.Ասոյանի մասնակցությունը մրցույթին երաշխավորելու հարցը դնել քվեարկության:

5.1.2 ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի «Ֆինանսներ» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Մկրտիչ Հրաչյայի Ասոյանին երաշխավորել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու համար։

«Լավագույն ուսանող» մրցույթին Մկրտիչ Ասոյանի մասնակցության երաշխավորությունն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

5.2 ԼՍԵՑԻՆ. «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող կրթաթոշակի մասին հարցը:

5.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ 2023 թվականից ֆակուլտետի նախկին շրջանավարտ, «Բիբլոս Բանկ Արմենիայի» գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանը, կնքված եռակողմ հուշագրի շրջանակում, ֆակուլտետի 5 լավագույն ուսանողների տրամադրում է կրթաթոշակ՝ ուստարվա համար, 1 միլիոն ՀՀ դրամի չափով: Հավելեց, որ գիտխորհրդի կողմից այս կրթաթոշակի հաստատման պահանջ չկա, սակայն անհրաժեշտ համարեց ներկայացնել ուսանողներին, ովքեր արժանացել են սահմանված կրթաթոշակին՝ 2025-2026 ուստարվա համար՝

1. Մամիկոնյան Վահե Վահագնի (Տնտեսագիտություն 2-րդ կուրս, ՄՈԳ՝ 18,54),
2. Պողոսյան Ասյա Արթուրի (Կառավարում 3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,91),
3. Ստեփանյան Կարինե Արթուրի (Կառավարում 3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,39),
4. Աղաջանյան Սվետլանա Արկադիի (Ֆինանսներ 3-րդ կուրս, ՄՈԳ՝ 18,68),
5. Մկրտչյան Մարիամ Գեղամի (Ֆինանսներ 4-րդ կուրս, ՄՈԳ՝ 18,97):

5.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.3 ԼՍԵՑԻՆ. Հոկտեմբերի 8-10-ը ֆակուլտետում կազմակերպվող «Փոխակերպվող տնտեսություն. մարդկային կապիտալի զարգացում, ստեղծարար նորարարական տնտեսություն, կայուն ներառական աճ» խորագրով միջազգային 2-րդ գիտաժողովի մասին հարցը:

5.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ արդեն երկրորդ տարին է, որ ֆակուլտետը կարողանում է նման լայնամասշտաբ միջոցառման կազմակերպչի դեր ստանձնել և հավելեց, որ գիտաժողովը կազմակերպվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և Տարածաշրջանային գիտության ակադեմիայի համագործակցության շրջանակում: Ընդգծեց, որ գիտաժողովի խոսնակների կազմն առավել քան ներկայացուցչական է, որում հատուկ հյուրի կարգավիճակով ընդգրկված են Նոբելյան 2 մրցանակակիրներ՝ Պոլ Կրուգմանը և Տարոն Աջեմօղլուն: Մատնանշեց, որ 17 երկրներից շուրջ 45 մասնակից է ընդգրկված, Հայաստանի 62 մասնակցից 32-ը ԵՊՀ աշխատակիցներ են: Նշեց, որ գիտաժողովում զեկուցումներով հանդես կգան ՀՀ ԿԲ, Էկոնոմիկայի նախարարության, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի, ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի և այլ բուհերի աշխատակիցները: Շեշտադրեց գիտաժողովի հովանավորների՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի և գործընկերոջ՝ Հայաստանի բանկերի միության դերակատարումը: Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի ներկայացումն ամփոփելով, կոչ արեց՝ ակտիվ և կազմակերպված մասնակցություն ցուցաբերել եռօրյա միջազգային գիտաժողովի աշխատանքներին:

5.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ